ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 21-ին Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) մեծ դահլիճում տեղի ունեցավ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» խորագրով միջազգային գիտաժողովի հանդիսավոր բացումը: Գիտաժողովը, որի ժամանակացույցն ընդգրկում էր հունիսի 21–23-ը, անցկացվում էր ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հովանավորությամբ: Միջոցառման հիմնական նպատակն էր նպաստել տարածաշրջանում ստեղծված իրողությունների առավել խոր իմաստավորմանը, տարածաշրջան, որն այսօր դժվար է պատկերացնել առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Գիտաժողովի աշխատանքների կազմակերպ-ման և համակարգման համար ստեղծված խորհրդի կազմում ընդգրկված էին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար Կամո Աթայանը, ԵՊՀ և ԱրՊՀ ռեկտորներ Արամ Սիմոնյանն ու Համլետ Գրիգորյանը և մոտ տասնյակ մշակութային ու քաղաքական գործիչներ:

Հանդիսավոր նիստի բացման խոսքում Կ. Աթայանն իրազեկեց, որ գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին տարբեր երկրների մոտ հարյուր ներկայացուցիչներ, որոնցից շատերը հայտնի են հայագիտության զարգացման մեջ ունեցած աչքի ընկնող ներդրումներով: ԼՂՀ-ից և ՀՀ-ից զատ՝ գիտաժողովում ընդգրկվել էին Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ուկրաինայի և այլ պետությունների ներկայացուցիչներ: Կ. Աթայանը ներկայացրեց ԼՂՀ նախագահի ուղերձը՝ ուղղված գիտաժողովի մասնակիցներին, իսկ ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը ներկայացրեց ԼՂՀ ԱԺ նախագահի ուղերձը:

Գիտաժողովի հանդիսավոր բացման արարողությանը ներկա գտնվող ԼՂՀ - վարչապետ Անուշավան Դանիելյանը, *ողջունելով ներկաներին՝ հույս հայտնեց, որ համաժողովի ներկայացուցչական կազմը թույլ կտա առաջիկա օրերի ընթացքում քննարկել հարցերի լայն շրջանակ, որն առնչվում է ինչպես Լեռնային Ղարաբաղի պատմությանն ու մշակույթին, նրա հոգևոր ժառանգությանը, այնպես էլ ԼՂՀ կենսագործունեության քաղաքական-իրավական հայեցակետերին, ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարներին: Ա. Դանիելյանը բեղմնավոր աշխատանք մաղթեց գիտաժողովի մասնակիցներին՝ վստահեցնելով, որ այն կարելի է գնահատել որպես երկրի միջազգային ճանաչմանն ուղղված ևս - մեկ կարևոր քայլ: Գիտաժողովի մասնակիցներին իր օրհնանքն ու բարեմաղթանքները հղեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ* Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը*: Իսկ ԼՂՀ ՊԲ նախարար, գեներալ-լեյտենանտ* Սեյրան Օհանյանը *նման միջոցառման կարևորությունը հիմնավորեց թե՛ գիտա-*

կան մտքի և թե՛ հայրենիքի պաշտպանի հաղթանակով: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև բանաստեղծ Վարդան Հակոբյանը*: ՀՀ ԿԳ նախարար* Լ. Մկրտչյանն *Արցախում միջազգային գիտաժողովի անցկացման փաստը որակեց որպես անկախ պետականության ամրապնդման վկայություն:*

Լիագումար նիստում ելույթներով հանդես եկան գերմանացի հայագետ Թեսսա Հոֆմանը *(«Պայթունավտանգ կետերից դեպի սառեցված կոնֆլիկտները. Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան և Հարավային Օսեթիան՝ համեմատության մեջ»), ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն* Աշոտ Մելքոնյանը *(«Արցախ-Ջավախք պատմական զուգահեռներ»), գիտաժողովի խորհրդի անդամ, պատմական գիտությունների դոկտոր* Համլետ Պետրոսյանը *(«Հնագիտական հետազոտություններն Արցախում. կազմակերպվածությունը, ձեռքբերումները, բացթողումները և հեռանկարները»):*

Գիտաժողովում ընդգրկված 92 զեկուցումների հիմնադրույթները նախապես տպագրվել էին առանձին գրքով: Հունիսի 22–23-ը գիտաժողովն իր աշխատանքը ծավալեց 3 մասնաճյուղերում՝ պատմության, մշակույթի և քաղաքագիտության, սոցիոլոգիայի ու տնտեսագիտության: Կարդացվեցին բազմաթիվ զեկուցումներ, որոնց մի մասը՝ ԱրՊՀ-ում, մշակութային մասնաճյուղը՝ Գանձասարում:

Պատմության մասնաճյուղի 8 նիստերում (համանախագահներ՝ Բ Հարությունյան, Հ. Մարգարյան, Էդ. Դանիելյան, Վ. Բալայան, Պ. Չոբանյան, Գ. Գեղամյան, Գ. Գրիգորյան, Հ. Աբրահամյան, Ա. Սիմոնյան, Ա. Վիրաբյան, Ա. Մելքոնյան, Ա. Վարդանյան, Էդ. Մինասյան*) լսվեցին 39 զեկուցում: Արցախի պատմության տարբեր ժամանակահատվածների կարևորագույն խնդիրները լուսաբանող զեկուցումներով հանդես եկան* Վալերի Խաչատրյանը *(Հայաստան)՝ «Արցախը ուրարտական սեպագիր աղբյուրներում»,* Բաբկեն Հարությունյանը *(Հայաստան)՝ «Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի շուրջը»,* Կլոդ Մութաֆյանը *(Ֆրանսիա)՝ «Արցախի իշխանական տների ազգաբանության փորձ»,* Ժիրայր Դեղեյանը *(Ֆրանսիա) «Արցախը և Կիլիկիան»,* Ալդո Ֆեռարին *(Իտալիա)՝ «Ռաֆֆին և Ղարաբաղի հայկական ազնվականությունը»,* Անդրեա Շմիդտը *(Բելգիա)՝ «Յոթերորդ դարի կրոնական պատկերամարտությունը Աղվանքում (Արցախ, Ուտիք և Մեծ Կողմանք)»,* Պավլիկ Չոբանյանը *(Հայաստան)՝ «Արցախի ազատագրության խնդիրը և վրաց դիրքորոշումը XVIII դ. 2-րդ կեսին»,* Ամատունի Վիրաբյանը *(Հայաստան)՝ «Ղարաբաղի սահմանները 1917–1923 թթ.»,* Վահրամ Բալայանը *(Արցախ)՝ «Տարածքային ամբողջականության միջազգային իրավունքի սկզբունքը և ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հեռանկարները» և այլք: Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ* Գաբրիելա Ուլուհոջյանի *(Իտալիա) «Արցախը Երեմիա Քեռմյուրճյանի քարտեզում» զեկուցումը նվիրված էր հայ եկեղեցիների և սրբատեղերի՝ XVII դ. մի կորսված արժեքավոր քարտեզի պատմությանը:*

Քաղաքագիտության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, փիլիսոփայության մասնաճյուղի հինգ նիստերում (համանախագահներ՝ Յու. Սուվարյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Գրիգորյան, Ալ. Մանասյան, Լ. Հարությունյան*) լսվեցին 22 զեկուցում: Ղարաբաղյան հակամարտության քաղաքական և դիվանագիտական են-*

թախտրքերի և մեր քաղաքական պահվածքի մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ քաղաքագետ Ալ. Մանասյանը *(Հայաստան):* Արթուր Մկրտչյանի *(Հայաստան)՝ «Ռազմական անվտանգության սոցիոլոգիական բաղադրիչները»,* Արթուր Աթանեսյանի *(Հայաստան)՝ «Տեղեկատվական պատերազմի վարման որոշ առանձնահատկությունները ինտերնետում (Ղարաբաղյան հակամարտության օրինակով)» զեկուցումներում քննարկվեցին տեղեկատվական պատերազմի ռազմավարության խնդիրները: ԼՂՀ-ում շուկայական տնտեսության անցման փուլերի, ձեռնարկատիրական ռիսկի կառավարման, սեզոնային միգրացիայի խնդիրների բացահայտման մասին էին* Արմինե Առստամյանի *(Արցախ),* Մարգարիտա Աֆանասյանի *(Արցախ) և* Միհրան Գալստյանի *(Հայաստան) զեկուցումները:*

Մշակույթի մասնախմբի 8 նիստերում (համանախագահներ՝ Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Լ. Վարդանյան, Հ. Սիմոնյան, Վ. Ղազարյան, Մ. Նավոյան) *լսվեցին 35 զեկուցում:* Համլետ Պետրոսյանի, Ժորես Խաչատրյանի, Աշոտ Փիլիպոսյանի, Վարդգես Սաֆարյանի *կողմից նստաշրջանին ներկայացված «Արցախի՝ Տիգրանակերտի ենթադրվող տարածքի և շրջապատի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները» վկայում են, որ Խաչենագետի ներքնահովիտը մշակութային և բնական մի յուրօրինակ տարածք է, որը ցուցադրում է հայ էթնոմշակույթի մշտական ներկայությունը ընդհուպ մինչև նոր ժամանակները: 2004–2005 թթ. Շուշիի, Հանդաբերդի վանքի պեղումների հիմնական արդյունքների և Արցախի տարածքից հայտնաբերված եկեղեցական սպասքի եզակի նմուշների մասին հետաքրքիր տեղեկություններ հնչեցին* Լյուբա Կիրակոսյանի, Վարդգես Սաֆարյանի, Նորա Ենգիբարյանի, Մանուշակ Տիտանյանի, Նյուրա Հակոբյանի, Ֆրինա Բաբայանի, Աղավնի Ժամկոչյանի *(Հայաստան) զեկուցումներում:*

Ազգաբանական հետազոտությունների համատեքստում հետաքրքրությամբ լսվեցին Լիլիա Վարդանյանի *(Հայաստան),* Ա. Տեր-Սարգսյանի *(Մոսկվա),* Համլետ Սարգսյանի *(Հայաստան) զեկուցումները՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի ազգագրության ուսումնասիրման ակունքներին, հետխորհրդային շրջանում գյուղական ընտանիքների զարգացման միտումներին և XIX դ. Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի ու էթնիկական կազմի շարժընթացին: Արցախում ազգագրական երևույթների որոշակի դրսևորումների մասին ուշագրավ նյութեր էին պարունակում* Աղասի Թադևոսյանի *(Հայաստան) «Դարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XXդդ.)»,* Սամվել Մկրտչյանի *(Հայաստան) «Տոները դարաբաղցիների ավանդական կենցաղում»,* Ս. Պողոսյանի *ու* Ա. Ստեփանյանի *(Հայաստան)՝ «Սյունիք-Արցախի ավանդական տարազախումբը հայոց տարազի համակարգում» զեկուցումները:*

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսական տեքստաբանության բաժնի վարիչ Ալվարդ Ղազիյանի *(Հայաստան) զեկուցման թեման էր «Արցախի բանագիտությունը XIX դ. երկրորդ կես – XX դ. (երեկ և այսօր)», իսկ* Թամար Հայրապետյանի *(Հայաստան) «Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) ժողովրդագիտա-*

կան գործունեությունը» և Կլարա Ասատրյանի *(Հայաստան) «Ս. Բարխուդարյանի դերը Արցախի վիմական արձանագրությունների հավաքման ու հրատարակման գործում» զեկուցումներում արժևորվում էր մշակութային այդ երկու երախտավորների գիտական վաստակը: «Ժողովրդական բանահյուսության դրսևորումներն Արցախյան ազատամարտում» զեկուցման մեջ բանախոս* Սվետլանա Վարդանյանը *(Հայաստան)* պատերազմ *և* հումոր. *անհամատեղելի թվացող իրողությունների համադրմամբ բացահայտում էր ծայրահեղ իրավիճակներում Արցախի ժողովրդի ոգու անպարտելիությունը:* Էսթեր Խեմչյանը *(Հայաստան) քննում էր «Պատմական անձանց վիպական կերպավորումը Արցախի բանահյուսության մեջ», իսկ* Վերժինե Սվազլյանը՝ *(Հայաստան) սփյուռքահայերից գրառված արցախյան բանահյուսության նշխարները:*

Արտակ Դաբաղյանի *(Հայաստան) «Արցախյան հակամարտության հայկական կողմի մարդկային կորուստները 1988–1991թթ.» և* Մխիթար Գաբրիելյանի *(Հայաստան) «Ադրբեջանից բռնագաղթվածների վերաբնակեցման գործընթացը ԼՂՀ-ում» ժողովրդագրական ազգագրությանը նվիրված զեկուցումները հիմնված էին բանախոսների կատարած հարցախուզային տվյալների վրա, և Ադրբեջանից հայ փախստականների վերաբնակեցման խնդիրը համարվում էր ԼՂՀ իշխանությունների քաղաքականության գերակայություններից մեկը:*

ՀՀ ԳԱԱ ԱԻ տնօրեն Արարատ Աղասյանի *և փոխտնօրեն* Աննա Ասատրյանի *«Շուշեցի մեծ քանդակագործը» և «Հայրենի Շուշվա կարոտը սրտում» զեկուցումները գրված էին քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125 և կոմպոզիտոր Գրիգոր Սյունիի ծննդյան 130-ամյակների առթիվ: Նույն ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ* Մուրադ Հասրաթյանն *իր «Հայկական միջնադարյան ճարտարապետության արցախյան ստեղծագործական դպրոցը» զեկուցման մեջ ժողովրդական մշակույթի այս բնագավառի դրսևորումները քննում էր վանական համալիրներում՝ Գանձասարում, Դադիվանքում, Գտչավանքում, Խաթրավանքում, իսկ ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ* Մհեր Նավոյանի *զեկուցումում կարևորվում էր Արցախի երաժիշտների ավանդը XI–XIII դարերի հայ հիմներգության մեջ:* Հրավարդ Հակոբյանի *(Հայաստան) բանախոսությունը նվիրված էր Արցախի հայրենանվեր իշխանների ու հոգևորականների ջանքերի շնորհիվ մեզ հասած փառահեղ ձեռագրերի ուսումնասիրությանը, իսկ* Անահիտ Բաղդասարյանը *(Հայաստան) անդրադառնում էր Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցերին:*

Հունիսի 23-ին Արցախի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտաժողովի եզրափակիչ լիագումար նիստը: Լսվեցին մասնաճյուղերի ղեկավարների հաղորդումները քննարկումների մասին: Ամփոփելով գիտաժողովի արդյունքները՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանն *ընդգծեց ընթերցված զեկուցումների կարևորությունը պատմամշակութաբանական ընդհանուր գործընթացներում:*

Գիտաժողովի շրջանակներում իրականացվեցին նաև մշակութային միջոցառումներ՝ տարաբնույթ հանդիպումներ, պատմաճանաչողական այցեր:

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ